



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 483-Ա

« 23 » 04. 2021 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
(ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ
ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
28-Ի N 1307-Ա/2 ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի 461-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմանը հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մայիսի 18-ի N 393-Ն հրամանի հավելվածի 4-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ


1. Հաստատել Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով իրականացվող վերապատրաստման հարցաշարը՝ համաձայն Հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 1057-Ա/Ք հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 1307-Ա/2 և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2021 թվականի ապրիլի 19-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով իրականացվող վերապատրաստման հարցաշարը հաստատելու մասին» N 461-Ա հրամանները:
3. ՀՀ ԿԳՄՍ նախարարի մամուլի քարտուղար Գեղամ Մելիքբեկյանին՝ հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքում:
4. «Կրթություն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Գ. Մինասյանին՝ հրամանը հրապարակել շաբաթաթերթի առաջիկա համարում:

ՆԱԽԱՐԱՐ՝

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

 Recoverable Signature

X 

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211